

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Անքաղաքավարի էշը

Ձին հանկարծ իշին մեկ տեղ ռաստ եկավ,
Ճամփեն շատ նեղ էր, անց կենալ չէլավ:
Ձին կարծեց՝ թե էշն իրան պատիվ կտա,
Բալքի ինքն իրան ճամփից դուս կգա:
Բայց ի՞նչ տեղ էր էշն մարիֆաթ առել,
Կոպիտ ծնվել էր, կոպիտ մեծացել:
Էնպես դունչը դուզ՝ ձիու վրա գնաց.
Ձին քաղաքավարի ղոդուղին ասաց:
«Չի՞ լինիլ, մի քիչ դու ղրաղ կանգնիս,
Որ ինձ տեղ ըլի, դու էլ ճամփա գտնիս:
Կամ թո՛ղ տուր, որ ես էլա առաջ գնամ»:—
Բայց իշի ուշը երբ ա մեկ անգամ
Էնպես անոշ խոսք մտել, տեղ արել,
Ոտն ու պոչն սկսեց դհա պինդ ցցել,
Ձիուն տեղ չտալ ու ճամփեն կտրել:
Ձին որ էս տեսավ, ինքն ղրաղ կանգնեց,
Մեր փաշա էշին համեցեք արեց:
«Չեմ ուզում, ասեց, քեզ պատվից քցեմ,
Ու քո իշության փառքիցն քեզ զրկեմ»:—